Մարիաննա ԵՓՐԵՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՄԱԿԴԻՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածում քննության են առնվում փոխաբերական մակդիրի տարբեր մեկնաբանություններն արդի լեզվաբանության մեջ, անդրադարձ է կատարվում փոխաբերական մակդիրի տեսակներին, ներկայացվում են փոխաբերական մակդիրի իմաստային հիմնական առանձնահատկությունները, քննվում են ինչպես տրամաբանական որոշչի և փոխաբերական մակդիրի, այնպես էլ փոխաբերության և փոխաբերական մակդիրի տարբերակիչ հատկանիշները: Փորձ է արվում ներկայացնել փոխաբերական մակդիրի իմաստային, ոճական որոշ առանձնահատկություններ Կամիլո Խոսե Սելայի ստեղծագործություններում:

Բանալի բառեր. *մակդիր, փոխաբերություն, փոխաբերական մակդիր, մակադրյալ, տարբերակիչ հատկանիշներ, նրբաբանություն, անձնավորող փոխաբերական մակդիր*

Գոյություն ունի մտածողության երկու եղանակ՝ հասկացաբանական-տրամաբանական և պատկերավոր-հուզական: Մտածողությունը կարող է արտահայտվել այնպիսի միջոցներով, որոնք կամ առարկայորեն են արտացոլում օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները կամ պատկերների միջոցով՝ խոսքի հատուկ կառույցներով՝ հագեցած հույզերով ու զգացմունքներով: Մտածողության հենց երկրորդ եղանակի դեպքում էլ առնչվում ենք փոխաբերական առումով գործածվող մակդիրների հետ՝ բառերի կապակցություններ, որոնք արտահայտում են պատկերավորություն, զգացականություն ու հուզականություն:

Լեզվաբանական գրականության մեջ մակդիրը դարձել է մի շարք ուսումնասիրությունների առարկա: Էդ. Ջրբաշյանն, օրինակ, նշում է, որ փոխաբերական մակդիրների մոտ միշտ առկա է բառի որոշակի իմաստափոխություն. որևէ նմանության կամ զուգահեռի հիման վրա բառը ձեռք է բերում նոր, անուղղակի իմաստ, որի շնորհիվ բնորոշումը դառնում է ավելի պատկերավոր և տպավորիչ: Գրականագետը, հակադրելով Չարենցի ստեղծած մակդիրները՝ *արևահամ բառ*, *արնանման ծաղիկներ, լուսապսակ ճակատ* և *հեզաճկուն պար, ողբաձայն երգ, կարոտած սիրտ, մուգ երկինք, ջինջ ջրեր,* ցույց է տալիս, որ ներկայացված առաջին շարքի մակդիրները ընկալվում են անուղղակի, պատկերավոր առումով /Ջրբաշյան, 1980: 233/: Պ. Պողոսյանը նույնպես հակադրում է իրար փոխաբերական և ոչ փոխաբերական մակդիրները՝ ընդգծելով, որ

մակդիրների ճնշող մեծամասնությունը հենց փոխաբերական են լինում /Պողոսյան, 1990: 46/:

Հատկանշական է Մ. Փոլադյանի մոտեցումը այս խնդրի շուրջ. «Մակդիրների փոխաբերական հատկությունը չի բացառվում, եթե միայն նրանցում առկա է «տեղափոխում ճանաչողական մի տարածքից մտային-ճանաչողական մի ուրիշ տարածք» /Փոլադյան, 2000: 86/:

Ռուս լեզվաբանները նույնպես զատում են փոխաբերական մակդիրները որպես այլաբերության յուրահատուկ տեսակ, որոնք «ոչ միայն բնորոշում են առարկան կամ ընդգծում նրա որևէ կողմը, այլև ուրիշ առարկայից կամ երևույթից նրան կցում են նոր, լրացուցիչ որակ» /Словарь литературоведческих терминов, 1974: 469-470/: Համաձայն այս բառարանի բնորոշման՝ մակդիրներն անդրադառնում են ոչ միայն առարկայի հատուկ, հիմնական հատկանիշներին, այլ նաև արտահայտում են հավանական, մտացածին, հատկանիշներ, հետևաբար և կարելի է մակդիրներն ընդգրկել դարձույթների մեջ: Փոխաբերական մակդիրների օրինակներով հարուստ է Ի. Գոլուբի աշխատությունը, որտեղ տրվում է նաև որոշիչների և փոխաբերաբար գործածվող մակդիրների համեմատություն՝

Лимонный сок – Лимонный свет луны

Седой старик – Седой туман

Лакей лениво прислуживал хозяину-Река лениво катит волны /Голуб, 2008: 139/

Վերոնշյալ օրինակների որոշիչները, ընդգծում, առանձնացնում են իրենց որոշյալի որևէ տրամաբանական հատկանիշ, սակայն օժտված չեն այն հուզական նրբերանգներով, որ հատուկ են փոխաբերական մակդիրներին: Վերջիններիս մեջ ակնհայտորեն դրսևորվում է հեղինակային մտածողության անհատականությունը. այս դեպքում հեղինակն օժտում է այս կամ այն առարկան, երևույթը նոր, առանձնահատուկ, երբեմն մտացածին հատկանիշներով, կանխամտածված կերպով վերաիմաստավորում համատեքստը՝ ստեղծելով նվազագույն համատեքստ մակդիր-մակադրյալ կապակցության մեջ: Այս դեպքում անհրաժեշտ է, որ մակդիր-մակադրյալ կապակցության կապն այնքան նեղ լինի, իսկ ստեղծված բանաստեղծական մթնոլորտն այնքան ամբողջական, որ ընկալելի լինի փոխաբերական մակդիրի իմաստը և, առհասարակ, տվյալ մակդիրի ընտրությունը:

Հայտնի լեզվաբան Բ. Տոմաշևսկին մատնանշում է ***փոխաբերության*** և ***փոխաբերական մակդիրների*** էական տարբերությունը. փոխաբերական մակդիրը սովորական փոխաբերությունից տարբերվում է համադրման տարրի առկայությամբ: Հեղինակը որպես օրինակ ներկայացնում է «зубы» և «жемчужины» բառերի համադրումը: Համատեքստում կարելի է «зубы» բառը փոխարինել «жемчужины» բառով: Այս դեպքում կառնչվենք ամենալայն իմաստով փոխաբերության հետ, որը հաճախ անվանվում է «մաքուր փոխաբերություն» (իսպ. metáfora pura), իսկ նրա

ոճական ողջ արդյունավետությունը «зубы» բառը չկիրառելու մեջ է: Այդուհանդերձ, կարելի է նաև ասել «жемчужные зубы» կամ «зубы - жемчужины», որի դեպքում կառնչվենք բառային համադրության հետ՝ անվանելով և՛ առարկան՝ իր ուղիղ իմաստով, և՛ փոխաբերաբար գործածվող բառը /Томашевский, 1999: 38/: Իհարկե, ինչ – ինչ առումով փոխաբերական մակդիրը չունի այն ուժգնությունը, որ բնորոշ է փոխաբերությանը, սակայն նրա յուրահատուկ հմայքը հենց ընթերցողի համար ավելի թեթև, մատչելի և ընկալելի լինելու մեջ է: Հեղինակի պնդմամբ՝ մակդիրը քայլ է դեպի փոխաբերական համեմատություն:

Բ. Տոմաշևսկիի հայեցակետն է կիսում նաև հայտնի լեզվաբան-ոճագետ Ի. Գալպերինը, որն, անդրադառնալով մակդիրների և փոխաբերությունների հիմնական տարբերությանը, նշում է, որ փոխաբերություններն ավելի սուր են և պարտադրող, մինչդեռ մակդիրներն ավելի մեղմ են ու խորքային: Հեղինակը նաև անդրադառնում է մակդիրների առանձնահատկությանը հոգեբանական տեսանկյունից. դրանց ենթագիտակցական ազդեցությունն ընթերցողի վրա այնքան ուժգին է, որ վերջինս սեփական կամքից անկախ սկսում է գնահատել և արժևորել երևույթներն այնպես, ինչպես հեղինակն է ցանկանում /Гальперин, 1981: 162/:

Հաճախ փոխաբերության ուժգնությունը պահպանելու համար փոխաբերական մակդիրը փոխարինվում է **նրբաբանությամբ (օքսիմորոնով)**, այսինքն՝ այնպիսի մակդիրով, որն իր իմաստով հակասում կամ հակադրվում է իր մակադրյալի իմաստին *(horribly beautiful, low skyscraper, pleasantly ugly face)* /Гальперин, 1981: 162/: Սակայն ամեն մի միմյանց ժխտող ու հակադիր հասկացությունների պատահական զուգորդում չի կարող դառնալ նրբաբանություն: Այն առաջանում է, երբ իմաստով միմյանց ժխտող բառ-հասկացություններն ընտրվում են այնպես, որ դրանց զուգորդումով արտահայտվի իմաստալից գաղափար /Պողոսյան, 1990: 77/: Նրբաբանության առանձնահատկություններից մեկը նրա հակիրճությունն է: Նշված յուրահատկությունների պատճառով կարելի է նրբաբանությունը դասել այն այլաբերությունների շարքին, որոնք այնքան էլ գործածական չեն գեղարվեստական գրականության մեջ:

Տվյալ հոդվածում մակդիրի առանձնահատկությունները քննելու համար որպես փաստական նյութ են ծառայել Կամիլո Խոսե Սելայի «Փեթակը» և «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» ստեղծագործությունները: Նշված ստեղծագործություններում կարելի է հանդիպել նրբաբանության օրինակներ, սակայն մակդիրի այս տեսակն ավելի քիչ գործածական է և քանակային առումով բավականին զիջում է փոխաբերական մակդիրների կիրառությանը: Օրինակ՝

El silencio con su larga campana volvió a llenar el cuarto. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

A lo mejor, es *una vieja pudibunda*. (C. J. Cela, La colmena, p.10)

Վերոնշյալ օրինակներում առանձնանում են *el silencio con su larga campana (լռությունը երկար զոնգունով)* և *una vieja pudibunda (ծերացած օրիորդ)* նրբաբանությունները, որոնք յուրահատուկ հմայք են հաղորդում տվյալ նկարագրություններին՝ դրանք դարձնելով ավելի ամբողջական:

Այլ տեսանկյունից է մոտենում փոխաբերական մակդիրների հետազոտությանը Ա. Ն. Վեսելովսկին իր «Историческая поэтика» հանրահայտ աշխատության մեջ: Հեղինակը մակդիրների զարգացման շղթայում անդրադարձ է կատարում փոխաբերական մակդիրներին՝ հիմք ընդունելով մակդիրային միավորը (эпитетная единица): Ա. Ն. Վեսելովսկին պարզաբանող մակդիրները բաժանում է իմաստային ենթախմբերի, որոնց մեջ որպես առավել հատկանշական ենթախմբեր առանձնացնում է **փոխաբերական** և **սինկրետիկ մակդիրները**: Առաջին ենթախմբի մակդիրներն ենթադրում են տպավորությունների զուգահեռականություն, համեմատում և տրամաբանական հավասարեցում: Որպես օրինակ բերվում է *чёрная тоска* կապակցությունը, որը ցույց է տալիս նախ խավարի և լույսի հակասությունը, զուգահեռներ է անցկացնում լույսի և ուրախ տրամադրության, խավարի և տխրության միջև, ապա ընդհանրացնում տեսողական տպավորությունն ու հոգեբանական նշանակությունը, որտեղ սևը դառնում է տխրության խորհրդանիշ /Веселовский, 1989: 61/: Մինչդեռ երկրորդ տեսակի մակդիրներն ունեն ֆիզիոլոգիական սկզբունքներ: Մարդկային տպավորությունները լրանում են զգայարաններով ու հաճախ խոսքի մեջ արտացոլվում չտարորոշված ձևով: Բնության ու կյանքի մասին հասարակական գիտելիքների խորացումն ընդարձակում է հոգեբանական պատկերացումները զանազան երևույթների վերաբերյալ, որի շնորհիվ մակդիրներին բազմազան բնույթ է հաղորդվում: Սակայն նրանցում դժվար է տարբերել զգայական տպավորություններից առաջացած և «երանգների գիտակցական համադրմամբ» ծագած մակդիրները: Այդ նպատակի համար պահանջվում են բազմազան օրինակներ: Զգայական միակցմամբ առաջացող սինկրետիկ մակդիրներ առանձնացնում են նաև այլ հեղինակներ, օրինակ՝ Վ. Ս. Բաևսկին և Վ. Ա. Սապոգովը /Большая советская энциклопедия, 1978: 30/:

Վերոնշյալ երկու տիպի մակդիրների հիմնական տարբերությունն այն է, որ փոխաբերական մակդիրները ենթադրում են գիտակցականության որոշակի աստիճան, իսկ միախառնված հատկանիշները բնութագրական են սինկրետիկ տիպին /Веселовский, 1989: 52/: Այնուամենայնիվ, այս երկուսի միջև մնում են բազմաթիվ ընդհանրություններ:

Այլ տեսանկյունից է անդրադառնում մակդիրների և փոխաբերական մակդիրների բնորոշմանը ռուս լեզվաբան Ի. Գալպերինը՝ հիմնվելով անգլերենի լեզվանյութի վրա: Վերջինս մակդիրներն ուսումնասիրում է կառուցվածքային և իմաստային տեսանկյունից: Հեղինակը իմաստային տեսանկյունից տարբերակում է մակդիրների ***զուգորդված (associated***

epithets) և ***չզուգորդված (unassociated epithets)*** տեսակները: *Զուգորդված մակդիրները* մատնանշում են այնպիսի հատկանիշ, որ բնորոշ է տվյալ առարկային, անմիջականորեն առնչվում է նրա հետ *(dark forest, careful attention, fantastic terrors)*: Մինչդեռ *չզուգորդված մակդիրներն* (նկատի են առնվում փոխաբերական մակդիրները) իրենց մակադրյալին ոչ բնորոշ, հաճախ նոր, անսպասելի հատկանիշ են փոխանցում՝ զանազան հոգեբանական զուգորդումներ առաջացնելով ընթերցողի մոտ իրենց հանկարծակիությամբ *(heart-burning smile, voiceless sands, bootless cries)* /Гальперин, 1981: 158/: Այնուամենայնիվ, հարկ է հաշվի առնել, որ չզուգորդված մակդիրները համարյա միշտ համատեքստային են և ազդեցիկ տպավորություն են գործում միայն տվյալ համատեքստի շրջանակներում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նույն դասակարգմանն է հարում նաև հայտնի լեզվաբան, ոճագետ Ի. Առնոլդը /Арнольд, 1973: 69/:

Կ. Վ. Գոլուբինան մակդիրները դասակարգում է ճանաչողական մոտեցումով՝ փորձելով ճանաչողական տեսանկյունից ամրագրել մակդիրներում պարփակված ոճական տեղեկատվությունը: Հեղինակը տարբերակում է մակդիրների մտավոր երեք կաղապար՝ ***փոխաբերական մակդիրներ*** *(печальное небо)*, ***փոխանվանական մակդիրներ*** *(громкий город)*, ***փոխաբերական-փոխանվանական մակդիրներ*** *(печальные глаза)* /Голубина, 1998: 25/:

Վերջին տիպի մակդիրային կապակցության մեջ հանդիպում ենք միաժամանակ և՛ փոխաբերական, և՛ փոխանվանական մակդիրներ՝ մի կողմից՝ փոխաբերական մակդիր աչքերի հատկանիշի զուգորդման ընկալումով, մյուս կողմից՝ փոխանվանական մակդիր՝ կառուցվածքային իմաստով (глаза печального человека): Հեղինակը պնդում է, որ համատեքստային մակարդակում վերոնշյալ երեք տիպերը փոփոխվում են, իսկ փոխաբերական մակդիրները համընդհանուր են և իրենց կաղապարը կազմում են նմանության հատկանիշի հիման վրա:

Իսպանական լեզվաբանական աղբյուրներում մակդիրի ուսումնասիրությունները մեծապես զիջում են փոխաբերության, փոխանունության և այլ դարձույթների շուրջ իրականացված հետազոտություններին: Առավել ծանրակշիռ կարելի է համարել Գ. Սոբեխանոյի պատմական անդրադարձը այս խնդրի առնչությամբ՝ հիմք ընդունելով անմիջապես մի քանի չափանիշներ (ձևաբանական, շարահյուսական, իմաստային, ոճական), սակայն համապարփակ դասակարգում չի տրվում, և շատ տեղերում ինչպես դասակարգումներն, այնպես էլ համապատասխան օրինակները վիճելի են: Հեղինակն առանձնացնում է փոխաբերական մակդիրի երկու տեսակ՝ **նկարագրական (epíteto descriptivo)** (manos níveas) և **ներգործող (epíteto sugestivo)**, որն առնչվում է ընթերցողի երևակայությանը և ստիպում մտածել (caía la nieve, blanca, silenciosa, interminable) /Sobejano, 1970: 150-151/:

Փոխաբերական մակդիրների քննության ժամանակ առաջ են գալիս մի շարք կարևոր հարցադրումներ. ի՞նչ լեզվական միջոցներով և ինչպիսի՞ համանմանությունների հիման վրա է կատարվում փոխաբերական մակդիրների իմաստային առկայացումը և ինչպե՞ս են ներազդում այսպիսի կապակցություններն ընթերցողի վրա:

Փոխաբերական մակդիրային կապակցությունների համար մեծամասամբ հիմք են ծառայում **անհատի մարդակերպական պատկերացումները** (антропоморфические представления): Մարդը իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ համեմատություններ է կատարում սուբյեկտիվ հիմունքներով, որով և պայմանավորված է գեղարվեստական երկի սուբյեկտիվ բնույթը: Ուստի, փոխաբերական մակդիրները հեղինակի և ընթերցողի միջև փոխգործունեություն են ստեղծում, ենթադրում վառ ու գունեղ պատկերներով հագեցած մակդիրային կապակցություններ, որոնց հիմքում ընկած են թաքնված համեմատություններ: Այս պարագայում անհրաժեշտ է, որ ընթերցողը կարողանա տեսնել և ընկալել բառիմաստի ետևում թաքնված երկրորդ պլանը: Չէ՞ որ փոխաբերությունն ինքնին պահանջում է ընթերցողից երևակայության և մտքի թռիչք, իսկ երբեմն նաև հումորի զգացում:

Իմաստային առումով ավելի դյուրին կերպով են փոխաբերականացվում բազմիմաստ, հարուստ տեղեկատվությամբ հագեցած այն ածականները, որ ցույց են տալիս, թե ինչից է պատրաստված տվյալ առարկան, ինչ ձև և պարունակություն ունի, ինչ գույնի է և նմանատիպ այլ բնորոշումներ: Քննենք մի քանի օրինակ Կ. Խոսե Սելայի ստեղծագործություններից.

La tímida, azulenca llama del gas (գազի ամոթխած կապտավուն կրակը) lame, pausadamente, los bordes del puchero. (C. J. Cela, La colmena, p.38)

“ O echa Ud. a puntapies a ese *hombre rojo irrespetuoso y sinvergüenza* ... *(բառացի՝ անհարգալից ու անամոթ շիկնած տղամարդ)* (C. J. Cela, La colmena, p.11)

Անկասկած, փոխաբերությունների ստեղծումը անմիջական կապի մեջ է գտնվում լեզվակիրների հասկացութային համակարգի, նրանց աշխարհընկալման, աշխարհայացքի, ինչպես նաև աշխարհի արժևորման հետ /Маслова, 2001: 183/: Այսինքն՝ հոգեբանական փոխաբերական մակդիրները ստեղծվում են՝ հիմնվելով այս կամ այն լեզվամշակութային հանրույթում ընդունված լեզվական համընդհանուր կարծրատիպերի, ավանդույթների ընկալման վրա:

La Filo *pone la voz cariñosa*... *(քնքուշ ձայնով է խոսում)*, Filo pone *la voz mimosa*... *(շոյիչ ձայնով է խոսում)* (C. J. Cela, La colmena, p.38)

...*noches tranquilas*... *(խաղաղ գիշերներ)* *días tristes*... *(տխուր օրեր)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.65)

...*el mirar lleno de amargura* *(դառնությամբ լի հայացքով)* (C. J. Cela, La colmena, p.10)

Rosario se sonreía con su *sonrisa triste* *(տխուր ժպիտով)*, *la sonrisa de los desgraciados de buen fondo*... *(բարի ներաշխարհ ունեցող դժբախտի ժպիտով)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.75)

Նշված օրինակներին, որոնք այսօր շատ գործածական են, հակադրվում են հեղինակային փոխաբերական մակդիրները, որոնց փոխաբերական իմաստը հիմնվում է անհատական զուգորդումների վրա, ինչպես և կարելի է նկատել հետևյալ օրինակներում՝

...*con su sonrisa amarga y ruin de hembras enfriadas* *(բառացի՝ սառած էգերի աննշան ու դառը ժպիտով)*, *con* su *mirar perdido muchas leguas a través de los muros* *(ցանկապատից շատ հեռու կորցրած ժպիտով)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

Un nido de alacranes *(կարիճների բույն)* se revolvió en mi pecho, en cada gota de sangre de mis venas, una víbora me mordía la carne. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.64)

Նշված օրինակներից առաջինում կիրառված փոխաբերական մակդիրով ներկայացվում է Կ. Խ. Սելայի «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպի գլխավոր հերոսի մոր արտաքինը, որի դժբախտ կյանքը արտացոլվել է իր դառն ու սառը ժպիտով: Սակայն ինչպես վերոնշյալ մակդիրների *(amarga, ruin, enfriada)*, այնպես էլ մակադրյալի *(hembra)* ընտրության մեջ ակնհայտորեն դրսևորվել է հեղինակի բացասական վերաբերմունքը նշված կերպարի նկատմամբ: Խիստ բացասական հարանշանակությամբ օժտված hembra *(էգ)* բառի փոխարեն կարող էր կիրառվել *mujer* *(կին)* բառը, սակայն վերջինս ընթերցողի մեջ չէր առաջացնի այն բազմաթիվ բացասական զուգորդումներն ու տրամաբանական դատողությունները, որ առկա են առաջին դեպքում: Երկրորդ օրինակում Կ. Խ. Սելայի կողմից օգտագործվել է *nido de alacranes* *(կարիճների բույն)* կապակցությունը որպես մակդիր, որի ընտրությունը նույնպես պատահական չէ: Ամբողջ նախադասությունը անհագուրդ վրեժի նկարագրություն է, որ տակնուվրա էր անում գլխավոր հերոսի հոգին: Այսպիսով, մի քանի օրինակների վերլուծությունն արդեն բավարար է ցույց տալու համար անհատական-հեղինակային փոխաբերական մակդիրների ուժգին հուզաարտահայտչականությունը և ընտրության դիտավորությունը: Բայցևայնպես, չնայած վերոնշյալ փոխաբերական մակդիրների հուզական ու հոգեբանական կողմի առավելություններին՝ դրանք բոլորն էլ հակված են էվոլյուցիա ապրելու և մի օր դառնալու իրենց բազմիմաստ մակադրյալի կայուն իմաստներից մեկը, այսինքն՝ լեզվական կամ «մարած» փոխաբերություն /Караулов, 1992: 127/:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ շատ մակդիրային կապակցություններ՝ թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական, անմիջականորեն առնչվում են մարդու զգացողություններին (տեսողական, լսողական, շոշափողական, հոտառական, համային): Սրանց մեջ կարելի է առանձնացնել ինչպես հեղինակային, այնպես էլ կայուն, դրոշմված մակդիրներ: Մեծամա-

սամբ այս կարգի մակդիրները Կ. Խ. Սելայի կողմից կիրառվում են հուզական, հոգեբանական, իսկ երբեմն նույնիսկ ճնշող առեղծվածային մթնոլորտ ստեղծելու համար: Օրինակ՝

... *la mirada llena de pesar*... (թախիծով լի հայացք) (C. J. Cela, La colmena, p.13)

... sonríen *con el aroma de su felicidad*... *(ժպտում են իրենց երջանկության բույրով) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p. 11)*

Doña Rosa pone *la dulce voz, la persuasiva voz de los consejos*... *(ընդունում է խորհուրդներին հատուկ քաղցր, համոզիչ ձայն)* (C. J. Cela, La colmena, p.14)

Pasaban cruelmente los instantes; las palabras *sonaban a voz de aparecido*... *(բառերը ուրվականի ձայնով էին հնչում)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

La dueña se ríe por lo bajo *con una risita cruel*. *(անգութ ժպիտով)* (C. J. Cela, La colmena, p.31)

Pasó por *momentos duros*, de *graves crisis de ánimo*. *(բառացի՝ դաժան ակնթարթներ, ծանր հոգեկան ճգնաժամեր)* (C. J. Cela, La colmena, p.13)

Կ. Խ. Սելայի ստեղծագործությունների առանձնահատկություններից է նաև մեկ մակադրյալի հետ մի քանի փոխաբերական մակդիրների կիրառությունը (հաճախ երկուսը, որտեղ առաջինի փոխաբերական իմաստը լրացվում կամ մանրամասնվում է երկրորդով): Օրինակ՝

... teníamos *un burrillo matalón y escurrido de carnes* que nos ayudaba en faenas... *(վտիտ ու չորացած ավանակ)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.13)

Los clientes... adoptaban *un aire serio, ecuánime, un poco vergonzante*... *(անկողմնակալ, լուրջ ու մի փոքր ամոթխած տեսք)* (C. J. Cela, La colmena, p.11)

Se oían *unas agrias, agudas, desabridas notas de flamenco callejero*... *(բառացի՝ դառը, սուր ու մռայլ փողոցային ֆլամենկոյի նոտաներ*) (C. J. Cela, La colmena, p.32)

Փոխաբերական մակդիրների մեջ որպես կարևորագույն ենթախումբ կարելի է առանձնացնել **անձնավորում ցույց տվողները**: Անձնավորող փոխաբերական մակդիրներն այնպիսի փոխաբերություններ են, որտեղ բնությանը, իրերին, երևույթներին, կենդանիներին վերագրվում են մարդուն բնորոշ հատկանիշներ, և դրանք ընկալվում են որպես կենդանի էակներ /Ջահուկյան, Խլղաթյան, 2007: 94/: Ավելի հազվադեպ կարող ենք հանդիպել հակառակ երևույթին, երբ մարդուն են վերագրվում ոչ մարդկային հատկանիշներ: Խոսե Սելայի ստեղծագործություններն աչքի են ընկնում անձնավորող փոխաբերական մակդիրների յուրահատուկ ընդգծվածությամբ և առատությամբ: Տվյալ հոդվածում փորձ է կատարվել դասակարգել վերջիններս ըստ նյութական և ոչ նյութական աշխարհների անձնավորման տարբեր փոխհարաբերությունների.

Բնությանը վերագրվող մարդկային հատկանիշներ

El mal aire traidor (չար ու դավաճան քամին) andaba aún por el campo perdido en los olivos ... (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

... tumbado boca arriba sobre el jergón; viendo pasar *las horas paralíticas* ... *(բառացի՝ կաթվածահար եղած ժամեր)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.53)

Նյութական աշխարհին վերագրվող մարդկային հատկանիշներ

... llevándose la mano al ala de *su triste y mugriento sombrero gris*... *(մռայլ ու կեղտոտ գլխարկ)* (C. J. Cela, La colmena, p.30)

Վերացական հասկացություններ (փիլիսոփայական, հուզական և այլն)

Sobre los dos hermanos se cuelgan *unos instantes de silencio, insospechadamente llenos de suavidad.* *(անսպասելի լռությամբ լցված քնքշանքի ակնթարթներ)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.37)

Le decía desde dentro del pecho *una vocecita tímida y saltarina* ... *(ամոթխած ու երերուն ձայն)* (C. J. Cela, La colmena, p.32)

Կենդանիներին վերագրվող մարդկային հատկանիշներ

La perilla volvió a echarse frente a mí y volvió a mirarme; ... tenía *la mirada de los confesores, escrutadora y fría*... *(ապաշխարողի զննող ու սառը հայացք ուներ)* (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.13)

Անշունչ առարկաներին, երևույթներին վերագրվող մարդկային հատկանիշներ

... se le ablandó *la fuerza del bigote* *(բեղերի ուժը թուլացավ)* y ya para abajo hubo que llevarlo hasta el sepulcro. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.15)

Մարդուն վերագրվող բնության հատկանիշներ

...tener *una primera juventud turbulenta, llena de complicaciones y de veleidades*... *(կամակորություններով ու դժվարություններով լի, փոթորկուն վաղ երիտասարդություն)* (C. J. Cela, La colmena, p.13)

Մարդուն վերագրվող կենդանիներին բնորոշ հատկանիշներ

... *la cara pintado el gesto de la bestia ruin, de la amorosa, suplicante bestia cansada*... *(հիվանդ կենդանու մեղմ, հոգնատանջ կենդանու աղերսող դեմքի արտահայտությամբ)* (C. J. Cela, La colmena, p. 10)

El niño *no tiene cara de persona, tiene cara de animal doméstico, de sucia bestia, de pervertida bestia de corral*. *(երեխան մարդկային դեմք չունի, ընտանի կենդանու, փարախի կեղտոտ և արատավոր գազանիկի դեմք ունի)* (C. J. Cela, La colmena, p.35)

Կամիլո Խոսե Սելայի ստեղծագործությունների յուրահատկություն-ներից մեկն էլ այն է, որ այստեղ հիմնականում շարահյուսորեն շրջուն և իմաստային առումով բարդ փոխաբերություններ են կիրառվում: Նրա վեպերում նկատելի է փոխաբերական մակդիրների խրթինություն՝ ձևի և իմաստային առումներով: Անժխտելի է, որ սա համապատասխանում է

գրողի գեղագիտական ճաշակին: Հիմնականում հեղինակի կողմից կիրառվող այլաբերական միջոցները դժվարությամբ են ընկալվում:

Seguía *de las mismas mañas* y *de iguales malas artes* (նույն խորամանկություններին էր դիմում)... (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.77)

... *su ademán, siempre huraño y despegado (խոժոռ և անբարեհամբույր շարժուձևով)*, con *su conversación hiriente y siempre intencionada*, (չարամիտ, վիրավորական զրույցներով) *con el tonillo de voz* (փաղաքշական ձայնով) que usaba para hablarme. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.77)

Միևնույն մակդիրը կարող է օգտագործվել և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով.

tener gran aire, aire de gran señor (փոխաբերական իմաստ) (գոռոզ տեսք ունենալ, ազնվազարմ պարոնի տեսք) – los aires del campo (ուղիղ իմաստ) (գյուղական օդը)

se veía que era de una gran familia (փոխաբերական իմաստ) (հարուստ ընտանիքից) - una pena grande (ուղիղ իմաստ) (մեծ ցավ)

Առանձնահատուկ է հեղինակի ընտրությունը փոխաբերական մակդիրների խնդրում, երբ ներկայացնում է հերոսների արտաքին նկարագրությունը.

atónitos ojos de un pájaro disecado (չորացած թռչունի չռված աչքեր); ... Doña Rosa clava sus *ojitos de ratón (մկան աչքերը)* ...; *dientecillos renegritos, llenos de basura (կեղտով լի սևացած ատամները)*...

... *con la camisa sucia de un mes (մեկ ամսվա կեղտոտ վերնաշապիկով)* ... (C. J. Cela, La colmena, p.34)

Վերոնշյալ փոխաբերական մակդիրների առաջին օրինակներում արտացոլվում է Տիկին Ռոսայի արտաքին նկարագրությունը, որտեղ վերջինս ներկայանում է որպես Իսպանիայի տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գյուղական, ոչնչով աչքի չընկնող մի կին: Մակդիրների ընտրության մեջ նկատելի է հեղինակի պարզ հակակրանքը կնոջ արտաքինի հանդեպ:

Բազմաթիվ փոխաբերական մակդիրներ կարելի է հանդիպել հատկապես հերոսների հույզերը և հոգեվիճակները բացահայտող, բնորոշող հատվածներում.

Por su cabeza vuelan las briznas de la conciencia que se le resisten... *(գիտակցության փոքրիկ պատառներ)* (C. J. Cela, La colmena, p.34)

... llorar largamente, hasta caer rendida, *con los nervios destrozados (պատառ-պատառ եղած նյարդերով)*, pero ya más tranquila, más razonable. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.61)

Դատելով վերոնշյալ օրինակներից, ինչպես նաև քննվող ստեղծագործությունների ընդհանուր հոգեբանական ճնշող մթնոլորտից՝ կարելի է ասել, որ հերոսների հուզական դաշտը որպես կանոն բացասական է՝ միախառնված համապատասխան տհաճ զգացողություններով՝ տխրություն, մելամաղձոտություն, անտարբերություն, զզվանք, ատելություն, վրեժի անհագուրդ ծարավ: Անշուշտ, նշված բոլոր հույզերի հետ կիրառ-

վում են բացասական զուգորդումներ առաջացնող համապատասխան մակդիրներ՝ *las briznas de la conciencia* (գիտակցության փոքրիկ պատառներ), *con los nervios destrozados* (պատառ-պատառ եղած նյարդերով):

Կարելի է եզրակացնել, որ հեղինակի երևակայությունը սահմաններ չի ճանաչում և չի կարող պարփակվել բառիմաստի սահմանափակ կաղապարով: Մակդիրային կապակցության մեջ կարող են որպես մակադրյալ ծառայել ամենաանհավանական առարկաներ ու երևույթներ, որտեղ մակդիրները բացահայտում են տվյալ առարկաների, երևույթների ամենաանսպասելի, երբեմն նույնիսկ տարօրինակ հատկանիշներ՝ առաջացնելով ընթերցողի գիտակցության մեջ ամենատարբեր զուգորդումներ: Ուստի, մակդիրների, մասնավորապես փոխաբերական մակդիրների գործածության բացառիկ նպատակադրումն անվիճելի է՝ հուզել, մեծ տպավորություն գործել, ընթերցողի ուշադրությունը հրավիրել այս կամ այն առարկայի, երևույթի այն հատկանիշների վրա, որոնք ինչ-ինչ պատճառով դեռևս չեն նկատվել կամ չեն կարևորվել:

Այսպիսով, փոխաբերական մակդիրների շուրջ կատարված հետազոտությունը մեզ բերում է այն համոզման, որ որքան ավելի կարևորվի մակդիրի դերը խոսքում, այնքան խոր և լիարժեք հնարավոր կլինի ներկայացնել պատկերաստեղծման գործում նրա հավելյալ՝ մակադրական արժեքը, ինչպես նաև փոխաբերական մակդիրների երկրորդական պլանում թաքնված տեղեկությունը, որը մեծապես նպաստում է, որ ընթերցանության ընթացքում հեղինակի հաղորդակցական միտումը ընկալվի ամբողջական ձևով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պողոսյան Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1990:
2. Ջահուկյան Գ. Բ., խլղաթյան Ֆ. Հ. Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2007:
3. Ջրբաշյան Էդ. Մ. Գրականագիտության տեսություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
4. Փոլադյան Մ. Մտահամակարգային լեզվաբանության և ոճագիտության դասախոսություններ, Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, 2000:
5. Арнольд И. В. Стилистика современного английского языка (Стилистика декодирования). Ленинград: «Просвещение», 1973.
6. Баевский В. С., Сапогов В. А. Большая советская энциклопедия. М.: Советская энциклопедия, 1978.
7. Веселовский А. Н. Историческая поэтика. М.: «Высшая школа», 1989.

8. Гальперин И. Р. Стилистика английского языка. Москва: «Высшая школа», 1981.
9. Голуб И. Б. Стилистика русского языка. М.: Издательство «Айрис- Пресс», 2008.
10. Голубина К. В. Когнитивные основания эпитетов в художественном тексте: Автореферат дисс.... канд. филол. наук. М., 1998.
11. Караулов Ю. Н. Словарь Пушкина и эволюция русской языковой способности. М.: «Наука», 1992.
12. Маслова В. А. Лингвокультурология. М.: Издательский центр «Академия», 2001.
13. Тимофеев Л. И., Тураев С. В. Словарь литературоведческих терминов. М.: «Просвещение», 1974.
14. Томашевский Б. В. Теория литературы. Поэтика. М.: Изд-во «Аспект Пресс», 1999.
15. Cela J. C. La colmena. Barcelona: Noguer, 1963.
16. Cela J. C. La familia de Pascual Duarte. Barcelona: Ediciones del Zodiaco, 1946.
17. Sobejano G. El epíteto en la lírica española. Madrid: Gredos, 1970.

М. ЕПРЕМЯН – ***О некоторых особенностях метафорического эпитета.*** – В данной статье рассмотрены различные интерпретации метафорического эпитета в современной лингвистике, затронут вопрос разновидностей метафорического эпитета и основные семантические признаки, рассмотрены как отличительные черты логического определения и метафорического эпитета, так и метафоры и метафорического эпитета. Представлены некоторые семантические и стилистические особенности метафорического эпитета в произведениях Камило Хосе Селы.

Ключевые слова: эпитет, метафора, метафорический эпитет, объект эпитетации, отличительные черты, оксюморон, олицетворительный метафорический эпитет

M. YEPREMYAN – ***On Some Characteristics of Metaphoric Epithet.*** – The present paper discusses various interpretations of metaphoric epithet in contemporary linguistics. It considers different types of metaphoric epithet and presents its main semantic characteristic features. The paper also studies the distinguishing features between logical attribute and metaphoric epithet, as well as those between metaphor and metaphoric epithet. An attempt is made to reveal some semantic and stylistic aspects of metaphoric epithet in the works of Camilo José Cela.

Key words: epithet, metaphor, metaphoric epithet, object of epithet, distinguishing features, oxymoron, personificated metaphoric epithet